բատէն 2 ժամ 10 տ. ք. բնակիչ։

38, Ղումղուճա՝ 1 ժամ Պալ-Խոտէէ, 1/2 ժամ Մուրատէ 40 տ. ք. բնակիչ։

39, Ղումլի Բուճախ՝ 1/2 ժամ հեռի Մուրատից 30 տ. հայ բնակիչ։

40, Կովագուտարի՝ Շոշկայ հարաւ 1/2 ժամ։

41, Կելութներ՝ Շոշկայ արևմուտք 1/2 ժամ։

42, Ղարա-Սէյտ-Ալի՝ Շոշկայ 1 1/2 ժամ։

43, Սէիտխան բէկ՝ Շոշկայ արևմուտք 2 ժամ։

44, Աւշիրին՝ 1 1/2 ժամ Խամուրի հարաւ Մուրատից 2 1/2 ժամ արևելքն և Փաշաւանի 2 1/2 ժամ արևմուտքն 15 տուն ք. բնակիչ։

45, Փալաթօքա՝ 2 ժամ Աւշիրինէ հարաւ, 1 ժամ Մուրատէն արևելք 30 տուն ք. բնակիչ։

46, Տլոյի գեղ՝ 1 ժամ Նորանից հարաւ՝ 1 ժամ Մուրատի արևելք, 20 տ. ք. բնակիչ։

47, Շեխու գեղ՝ 1/2 ժամ Տլոյի հարաւ 1 1/2 ժամ Մուրատի արևելք, 10 տուն ք. բնակիչ։

48, Արապ Ալի՝ 2 1/2 ժամ Մուրատէ արևելք, 1/2 ժամ 20 տ. ք. բնակիչ։

49, Ուսուֆ բէկի գեղ՝ 1 ժամ Արապ Ալիից հարաւ, Մուրատէն 2 ժամ 15 տ. ք. բնակիչ։

50, Քօշք՝ 1 ժամ Արաճանուց, Մուրատէ 3 ժամ հարաւ, 60 տուն ք. բնակիչ, 7—8 տուն եկեղ. հայեր։

51, Շամէ՝ Մուրատէ 2 1/2 ժամ։

Այս տեղ ճանապարհը երկուքի կը բաժանուի, մին Փրէ Մասիով Մանազկերտ. իսկ միւսն Ղարաղայա որ Փրէ Մասիի մօտ է։

52, Շահնոք որ Փաշվանայ 1 ժամ հարաւ և Խանոյա 1 1/2 ժամ, 10 տ. ք. բնակիչ։